

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2016 թվականի  
դեկտեմբերի 26-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 37 անդամներից 26-ը (ցուցակը կցվում է)

Օրակարգ.

1. <<Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության>> ամբիոնի վարիչի հաշվետվությունը:

/զեկ. Ֆիզ. աշխ. և ջրաօդ. ամբ.վարիչ Թ.Վարդանյան/

2. 2016/2017 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման ընթացքը ֆակ-ում

/զեկ. փոխդեկաններ պրոֆ Վ.Պ.Վարդանյան, դոց.Ա.Թ.Գրիգորյան/

3. 2016/2017 ուս.տարվա 1-ին կիսամյակի դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարման ընթացքը ֆակուլտետում:

/զեկ. ամբ.վարիչներ/

4. Գիտական հաղորդում

5. Ընթացիկ հարցեր

**ԼՄԵՑԻՆ** - <<Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության>> ամբիոնի վարիչ՝ Թ.Գ.Վարդանյանի հաշվետվությունը: Նա ներկայացրեց ամբիոնի գործունեությունը: Ամբիոնում աշխատանքներ են տարվում թե՛ ուսումնական և թե՛ գիտական ուղղություններով: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը աշխատանքներ է կատարել Գերմանիայի Հումբոլտի համալսարանի դասախոսների և ուսանողների հետ՝ բուսահողի կազմի անալիզ իրականացնելու ուղղությամբ: 2017թ նախատեսվում է ուսանողների գործուղում նշված համալսարան, ինչի վերաբերյալ կա նախնական բանավոր պայմանավորվածություն: Ուսումնագիտական ընթացքը լիարժեք ապահովելու համար, ամբիոնը նպատակ ունի 1.բարելավել արտադրական պրակտիկաների ընթացքը, 2. կահավորել լսարանները համապատասխան բարձրակարգ

տեխնիկայով, 3. ստեղծել կիլմայի փոփոխության ուսումնագիտական կենտրոն: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի աշխատակիցները /դասախոսները/ կատարել են գիտական հետազոտություններ, որի վերաբերյալ հրատարակել են բազմաթիվ հոդվածներ և թեզիսներ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Վ.Պ.Վարդանյան** – Բավարար գնահատեց ամբիոնի կողմից կատարած աշխատանքը և առաջարկեց հաստատել այն:

**Մ.Ա.Գրիգորյան** – Ելույթի ընթացքում Մ.Գրիգորյանը անդրադարձավ ամբիոնի կողմից թվարկած արտադրական պրակտիկաների վերաբերյալ թեմային, նա մեջբերեց միջազգային փորձը և նկատեց, որ արտադրական պրակտիկաների գործուղելը պահանջում է մեծ ֆինանսավորում: Մ.Գրիգորյանն առաջարկեց հետամուտ լինել լսարանները կահավորելու հարցին, որպեսզի լաբորատոր և ուսումնագիտական աշխատանքներն անցկացվեն պատշաճ մակարդակով:

- Կիլմայի փոփոխության ուսումնագիտական կենտրոն ստեղծելու նպատակն արդարացված է, սակայն նախ պետք է մտածել մասնագիտությունը վերաբացելու ուղղությամբ,-ասած Մ.Գրիգորյանը: Խոսքի վերջում Մ.Գրիգորյանը բարձր գնահատեց ամբիոնի վարիչի կատարած աշխատանքը ինչպես նաև ցանկացած հարցին հետամուտ լինելու պատրաստակամությունը:

Մ.Գրիգորյանը բավարար գնահատեց ամբիոնի կողմից կատարած աշխատանքը և առաջարկեց հաստատել այն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել հաշվետու ժամանակաշրջանում <Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության>-ի ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությունը:

**ԼՄԵՑԻՆ** – Փոխդեկաններ Վ.Պ.Վարդանյանի /հեռակա ուսուցում/ և Ա.Թ.Գրիգորյանի /առկա ուսուցում/ հաղորդումը 2016/2017 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման ընթացքի վերաբերյալ: Մ.Գրիգորյանը շեշտադրում կատարեց քննություններին և ստուգարքներին ուսանողների ստուգման գրքույկներով ներկայանալու պարտադիր պայմանը /կարևորությունը/:

-Տեղեկագրերում և ստուգման գրքույկներում գնահատականի անհամապատասխանության պատասխանատվությունը կրելու է դասախոսը,-  
ասաց Ա.Գրիգորյանը:

Վ.Վարդանյանը ներկայացրեց ավարտական քննությունների, եզրափակիչների ժամանակացույցները ինչպես նաև ներկայացրեց ուս.վարձը չվճարած ուսանողների անունները, որոնք թույլ չեն տրվել մասնակցելու քննություններին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ընդունել ի գիտություն

**ԼՄԵՑԻՆ** - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ամբիոնի վարիչներ Ռ.Մովսեսյանի, Ս.Հայրոյանի, Թ.Վարդանյանի, Ա.Պոտոյանի և Պ.Դավթյանի ելույթը ամբիոնի դասախոսների 2016/2017 ուս.տարվա 1-ին կիսամյակի ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարման ընթացքի վերաբերյալ: Բոլոր ամբիոնի վարիչները նշեցին, որ բաց թողնված դասաժամերը փոխարինվել կամ լրացվել են և դասաժամերի բացթողումներ առկա չեն

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Մ.Ա.Գրիգորյանն իր խոսքում առաջարկեց ամբիոնի վարիչներին անբարեխիղճ դասախոսներին չընդգրկել աշխատանքային գործընթացում: Խոսքի վերջում նա հավելեց, որ դասախոսների որակի համար պատասխանատու են լինելու ամբիոնի վարիչները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ընդունել ի գիտություն

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան